ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«12» նոյեմբեր 2020թ. N 3988 - L

ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ (COVID-19) ԲՈՒԺՈՒՄ ՍՏԱՑՈՂ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻՆ ԱՎԻԳԱՆ /ՖԱՎԻՊՐԻԱՎԻՐ/ ԴԵՂԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.11-րդ հոդվածը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հաստատել «Հիվանդանոցային պայմաններում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) բուժում ստացող պացիենտներին Ավիգան /Ֆավիպրիավիր/ դեղի տրամադրման կարգը»՝ համաձայն Հավելվածի:

2. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին՝

հիվանդանոցային պայմաններում կորոնավիրուսային հիվանդությամբ բուժում ստացող պացիենտներին Ավիգան /Ֆավիպրիավիր/ դեղի տրամադրումը կազմակերպել սույն հրամանի հավելվածով հաստատված կարգի համաձայն:

3. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված
Առողջապահության նախարարի
«12» նոյեմբեր 2020թ. N 3988 - Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ (COVID-19) *ԲՈՒԺՈՒՄ ՍՏԱՑՈՂ* ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻՆ ԱՎԻԳԱՆ /ՖԱՎԻՊՐԻԱՎԻՐ/ ԴԵՂԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Կլինիկական ընթացք	**Հակավիրուսային թերապիա**
I.Այն պացիենտները, որոնք հոսպիտալացման պահին միաժամանակ կբավարարեն ստորև նշված ա, բ, գ, դ չափանիշներին՝ ա. հաստատված COVID-19 (լաբորատոր թեստավորման՝ քթըմպանից և ըմպանից վերցրած քսուքի ՊՇՌ հետազոտման մեթոդով դրական արդյունք), բ. ճառագայթային ախտորոշման մեթոդներով (կրծքավանդակի ռենտգենոգրաֆիա, համակարգչային շերտագրություն) հաստատված թոքաբորբ, գ. մարմնի ջերմաստիճանն անութափոսում՝ 37.5°C և ավելի, դ. արյան թթվածնով հագեցվածությունը՝ SpO2 ≥94%: II.Անկախ սեռից III.Չափահաս IV.Հոսպիտալացված V.Վերարտադրողական տարիքի կանանց համար հղիության թեստի բացասական արդյունք բուժումը	Ավիգան /Ֆավիպրիավիր/ պետք է ընդունել բերանացի, հետևյալ դեղաչափով. • 1-ին օրը՝ 9 հաբից (1800մգ) օրական 2 անգամ, ընդ որում առաջին օրվա երկրորդ դեղաչափը պետք է տրվի առաջին դեղաչափից առնվազն 4 ժամ անց • Սկսած 2-րդ օրից՝ 4 հաբից (800մգ) օրական 2 անգամ: • Բուժման ընդհանուր տևողությունը 7 օր է: Այնուամենայնիվ, բուժման նշված տևողությունը կարող է կրճատվել, եթե բուժող բժիշկը կորոշի, որ պացիենտը ենթակա է դուրս գրման՝ ելնելով վիճակի լավացումից, վերականգնումից կամ COVID-19 թեստի բացասական արդյունքից, ինչպես նաև, եթե կողմնակի ազդեցությունների կամ այլ պատճառների հետևանքով անհրաժեշտություն կառաջանա դադարեցնել Ավիգանի /Ֆավիպրիավիր/ ընդունումը:

սկսելուց առաջ:	
Ստորև ներկայացված բացառման չափանիշներից որևէ մեկին համապատասխանելու դեպքում պացիենտը չի կարող ստանալ Ավիգան /Ֆավիպրիավիր/ : Ինչպես նաև բուժման / Ավիգան /Ֆավիպրիավիր/ ստանալու/ ընթացքում բացառման որևէ չափանիշի համապատասխանելու դեպքում, Ավիգանի /Ֆավիպրիավիր/ ընդունումը պետք է դադարեցնել: 1) Մարմնի ջերմաստիճանն անութափոսում 37.5°C -ից բարձր՝ ջերմության բարձրացման սկզբից ավելի քան 10 օր: 2) Արյան թթվածնով հագեցվածությունը՝ SpO2 <94%: 3) Բակտերիալ ինֆեկցիայի առկայություն /նաև կասկածելի/ 4) Մնկային հիվանդության առկայություն /նաև կասկածելի/ 5) Սրտային անբավարարություն 6) Լյարդային անբավարարություն 7) Երիկամային անբավարարություն 8) Գիտակցության կամ կողմնորոշման խանգարում 9) Հղիություն /նաև կասկածելի/ 10) Բուժման ընթացքում և դրա ավարտից 14 օրվա ընթացքում կոնտրացեպտիվների օգտագործումից հրաժարվելը 11) Ժառանգական քսանտինուրիա 12) Անամնեզում հիպոուրիկեմիայի կամ քսանտինային միզաքարերի առկայություն	

13) Անամնեզում պոդագրայի կամ հիպերուրիկեմիայի առկայություն 14) Իմունոսուպրեսիվ դեղորայքի ընդունում 15) Պացիենտներ, ովքեր ջերմության բարձրացման /≥37.5°C/ սկզբից 9 օրվա ընթացքում ստացել են ալֆա ինտերֆերոն կամ հակավիրուսային դեղորայք, այդ թվում՝ հիդրոքսիքլորքվին սուլֆատ, քլորոքվին ֆոսֆատ, լոպինավիր-ռիտոնավիր, ցիկլեսոնիդ, նաֆանոստատ մեզիլատ, կամոստատ մեզիլատ, ռեմդեսիվիր 16)S ARS-CoV-2 կրկնակի վարակում 17) Նախկինում ֆավիպիրավիր ստացած պացիենտներ:	
Ի լրումն գործնականում անհրաժեշտ լաբորատոր և գործիքային հետազոտությունների՝ հարկավոր է կատարել հետևյալ լաբորատոր և գործիքային հետազոտությունները. 1) COVID-19 լաբորատոր թեստավորում ՊՇՌ հետազոտման մեթոդով առնվազն 2 անգամ / Ավիգանի /Ֆավիպրիավիր/ ընդունման առաջին և վերջին օրերին/ 2)Կրծքավանդակի ռենտգենոգրաֆիա կամ համակարգչային տոմոգրաֆիա առնվազն 2 անգամ / Ավիգանի /Ֆավիպրիավիր/ ընդունման առաջին և վերջին օրերին/ 3)Լաբորատոր քննություն առնվազն 3 անգամ 4)Կլինիկական ախտանիշներ և կենսական ցուցանիշներ ամեն օր 5)Կլինիկական վիճակի գնահատում 7-միավորանոց սանդղակով ամեն օր	

Վերը նշված տվյալները պետք է գրանցվեն հիվանդության պատմագրին կից թերթիկում:	